

ՊՈԼՍՈՅ ՄԷՋ, ԹՐՔԱ-ՀԱՅԿԱԿԱՆ

«TRAGI-COMEDIE» ՄԸ

12-7-99-թ.ին, «քրքական գիտածողովի» մը մէջ, Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը ներկայացնող Շահան Արքեպիսկոպոս Սվանեան՝ Օսմանեան թուրքերուն Հայ ազգին հանդէպ ցուցարեքած «լայնախոհութեան» մասին կը խօսի և Օսմանեան Պետութեան երախտագիտութիւն կը յայտնէ:

Դեռ ամիս մը առաջ՝ 7 Սեպտեմբեր 1999-թ.ին, «Նայիրի»ի մէջ, խոր ընդվզումով արտայայտուած էինք Պատրիարք Մեսրոպ Մութաֆեանի մասին որ, 22-5-1999-թ.ին մեծ շփոթումով, Օսմանեան Սուլթան Մէհմէտ Բ.-ին դամբարանը գացած էր և հոն յայտնած երախտագիտութիւն Սուլթանին, որ Պոլսոյ Պատրիարքութիւնը հիմնած է: Պատրիարքին այս տիրահաճոյ ընթացքը, շողոփոթութեան մարմնացումն էր:

Բայց, 12-7-1999-թ.ին, կրկին Պոլսոյ մէջ, Պատրիարքութեան երկրորդ կրօնական անձնաւորութիւնը եղող Շահան Արքեպիսկոպոս Սվանեանին ելոյթը, պնակալիզութեան և շողոփոթութեան սահմաններէն ալ անդին անցնող և հայկականութեան, Հայ Ազգին բոլոր սրբութիւններուն ուրացումն է:

Ի՞նչ է պատահածը: Թուրքերը, վերջերս, իրենց նկարագրին յատուկ դիմափոխութեամբ, գայլի մարմնին վրայ գառնուկի մորթ քաշած, նոր դիւանագիտութիւն մը կիրարկել սկսան:

[Այս նոր դիւանագիտութիւնը, Հայ Ազգին շատ ծանօթ «քրքական թատրոն» մըն է]:

Միոնիստ ամերիկացիներուն հրամանով և բեմադրութեամբ կատարուած այս «թատրոն»ին նպատակը, Թուրքիոյ՝ Եւրոպական Տնտեսական Միութիւն մուտքը ապահովել է:

Այս պատճառաւ թուրքերը, Յունաստանի հանդէպ, սիրարանութեան անհաւատալի արտայայտութիւններ կատարել սկսան: Այն Յունաստանին՝ որուն դէմ իրենք, մինչև վերջերս, շատ ծանր անարգանքներ և սպառնալիքներ կ'ընէին:

Բայց թուրքերուն ա'յս աստիճան քաղաքականութիւն փոխելուն և կեղծաւորութիւն ընելուն մէջ, շատ կարևոր պատճառ մը կար:

Այսպէս վարուեցան որովհետեւ Յունաստանը, Եւրոպական Տնտեսական Միութեան մէջ, “VETO”ի իրաւունք ունի, և առանց Յունաստանի հաւանութեան, թուրքերը այս միութեան մէջ չեն կրնար մտնել:

Յունաստանը պիտի հաւատա՞յ թրքական այս կեղծ, սիրագեղական արտայայտութիւններուն և կրկին թրքական ծուղակին մէջ պիտի իյնա՞յ: Ա՛յն Յունաստանը՝ որ բուրանական խուժաններուն Անաթոլիա ոտք կոխած օրերէն սկսեալ մինչև այսօր, թրքական բարբարոսութիւններուն զոհը եղած է:

Բայց սիոնիստներուն ապագայ ծրագիրներուն համար, Թուրքիոյ Եւրոպական Միութիւն մտնելը, խիստ կենսական կարևորութիւն ունի:

Այս պատճառաւ Սիոնիստ Ամերիկացիները, Էօճալանի առեւանգման մտայլ օրերուն ըրածնուն նման, Յունաստանի վրայ շատ ծանր սպառնալիքներով ճնշում կը բանեցնեն:

Եւ մենք վախը ունինք, որ Յունաստանի ղեկավարները, երկրին «բարձրագոյն շահերը» նկատի առնելով, պիտի ստիպուին տեղի տալ:

Թուրքիոյ Եւրոպական տնտեսական Միութեան մէջ մտնելու դիւանագիտական աշխատանքներուն մաս կը կազմէին նաև, վերջերս Պոլսոյ մէջ կատարուած այն ստայօդ, «կեղծ գիտա-ժողովները», որոնց նպատակը, Թուրքիոյ «ժողովրդավար և լայնախոհ» երկիր մը ըլլալը ապացուցանել էր:

Այս խարեական գիտա-ժողովներէն մէկը, 12-7-1999-թ.ին, Պոլսոյ տիրահռչակ «Երլտըզ»ի պալատին մէջ տեղի ունեցաւ:

Ա՛յն Պալատին մէջ ուր, արիւնարբու Սուլթան Ապտիւլ Համիտ, Հայ ազգին բնաջնջման որոշումը տուած էր:

Եւ ճակատագրի ի՛նչ հեգնանք՝ այս արիւնոտ պալատին մէջ, 12-7-1999-թ.ին, Օսմանեան Կայսրութեան հիմնարկութեան 700-րդ տարեդարձին առթիւ, «Օսմանեան լայնախոհութեան» փառաբանութիւնը պիտի կատարուէր:

Մենք, իբր նախկին Պոլսեցի, գիտենք այս թրքական քաղաքական գիտաժողովներուն իրականութեան հետ կապ չունեցող, միայն սուտերով լեցուն «գաւեշտախաղ» մ’ըլլալը:

Բայց, միտքերնէս չէր անցնիր, որ այս արիւնոտ պալատին մէջ, 12-7-1999-թ.ին, հայ Արքեպս. մը, թուրքերուն հանելի թուելու համար կատարած իր ելոյթին մէջ, հայկական պատմութիւնը ա՛յս

աստիճան պիտի չարափոխէր, և մինչև ազգութային հասնող արտայայտութիւններ պիտի ունենար:

Այստեղ պիտի ջանանք տալ, թրքական «գիտածողովին» մէջ, Շահան Արքեպս. Սվանեանին իբր Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին և Հայ համայնքին ներկայացուցիչ՝ ըսածները:

«1461 թուականէն մինչև այսօր՝ 538 տարիներ հայերը, այս երկրին մէջ, իրենց Պատրիարքարանով ու Պատրիարքներով պահած են իրենց լեզուն, հաւատքը և իրենց ժողովրդային առանձնա-յատկութիւնները, որոնց շնորհիւ, իբրև հաւատարիմ հայրենա-կիցները Օսմանեան կայսրութեան, ընծայած են պետական, ար-ուեստի, գիտութեան և մշակոյթի գետիներու վրայ ընտիր և զար-գացած մարդիկ:

Իմ հոգևոր ծննդավայրս Սուրբ Երուսաղէմն է: Այդ Սուրբ քաղաքին և անոր սրբավայրերուն մէջ ինչ որ ունինք մենք այսօր, կը պարտինք Օսմանեան կայսրութեան:

Մենք, բառին ընթացիկ առումով, փոքրամասնութիւն չենք:

Պարտքի ու իրաւունքի կապերով, լրիւ հայրենակիցներն ենք թրքական հանրապետութեան:

Այո՛, եթէ փոքրամասնութիւն բառը գործածել ուզեն, մենք զայն կը հասկնանք միայն իբրև կրօնական փոքրամասնութիւն, առանց մոռնալու որ այսօր, Թուրքիոյ ամէնէն բազմամարդ քրիստոնեայ համայնքն ենք [Խօթանասուն միլիոն թուրքին մէջ երեսուն հազար հայ - ի՛նչ մեծ թիւ - 32.]:

Կ'աշխատինք պարկեշտօրէն երկրի յառաջդիմութեան համար, եթէ պէտք է՝ մեր կեանքն ալ կու տանք այս երկրին համար, պա-հելով անշուշտ մեր դարաւոր լեզուն, հաւատքը, մշակոյթը, եկե-ղեցիները, դպրոցներն ու հիւանդանոցը»:

Շահան Սվանեան Արքեպս.ին խօսքերը, քանիցս կ'ընդհատուին, ներկաներու ջերմ ծափահարութիւններով:

Ապա, նախկին Ճարտարարուեստի նախարար Ճահիթ Արալ, բնմ բարձրանալով կը շնորհաւորէ Շահան Սրբազանը իր այնքա՛ն «տե-ղին ու գեղեցիկ» խօսքերուն համար, և իր ձեռքով Օսմանեան պատ-մական գիւնանշանով պատրաստուած շատ թանկագին ափսէ մը կը նուիրէ անոր:

13-7-1999-թ. «Մարմարա» օրաթերթ - Պոլիս

★ ★ ★

Շահան Արֆեսյա. իր ելոյթին մէջ կ'ըսէ, թէ՛ «1461-թ.էն մինչև այսօր, 538 տարիներ, հայերը այս երկրին մէջ պահած են իրենց լեզուն և իրենց հաւատքը»: Եւ մեծապատիւ Սրբազանը այս խօսքերը կ'ընէ՝ ապացուցանելու համար թրքական «լայնախոհութիւնը»:

Մենք, մինչև այսօր, հայու անուն կրող քանի մը անհատներէ, թրքահանոյ արտայայտութիւններ իմացած ենք:

Բայց, ասոնց մէջէն ոչ մէկը, այս Սրբազանին չափ, հայոց պատմութիւնը կարողացած էր չարափոխել:

Ուրեմն, մենք հիմա, Շահան Սրբազանին ըսած ճարտութներուն պատասխանենք՝

Արդեօք 1461-թ.ին, Օսմանեան կայսրութեան մէջ ապրող հայերուն թիւը ի՞նչ էր, և այսօր՝ 538 տարիներ յետոյ, Թուրքիոյ մէջ ապրող հայերուն թիւը ի՞նչ է:

Սրբազան, դուք մոռցած էք հայոց պատմութիւնը: 1461-թ.ին, Արևմտեան Անաթոլիոյ մէջ, Օսմանեան կայսրութեան կողմէ գրաւուած «Արևմտեան Հայաստան» անունով երկիր մը գոյութիւն ունէր, իր միլիոնաւոր հայ բնակիչներով:

Այսօր, 538 երկար տարիներ յետոյ, ի՞նչ մնացած է այս Արևմտեան Հայաստանէն և հոն ապրող հայութենէն:

Այսօր Հայաստան-ը «Թուրքիա»ի վերածուած է, և այդ հողերուն վրայ այսօր, Հայ անունով «Հայ» մը գոյութիւն չունի:

Սրբազան, ա՞յս է ձեր փառաբանած «Օսմանեան» լայնախոհութիւնը:

Եւ այս միլիոնաւոր հայութենէն մնացած են այսօր, Հայաստանի հողին հետ կապ չունեցող քաղաքի մը՝ Պոլսոյ մէջ, 30,000 [երեսուն հազար]ի շուրջ հայութիւն մը, թուրքերուն ձեռքը իբր պատանդներ, գերիներ:

Թուրքերը այս պատանդ-հայերը կը պահեն Պոլսոյ մէջ և անոնցմէ կ'օգտուին Հայ ազգը բաժանելու համար:

Եւ թուրքերը այս պատանդ հայերուն, ատեն-ատեն, իրենց ծրագիրներուն ի նպաստ, սուտերով լեցուն յայտարարութիւններ կատարել կու տան:

Ինչպէս որ դուք, Սրբազան, 12-7-1999-թ.ին, Պոլսոյ մէջ, Ապտիւլ Համիտին արիւնոտ «Երլտըզ»ի պալատին մէջ, թուրքերուն «անգոյ» լայնախոհութիւնը փառաբանելու համար, «պնակալէ-

գութեամբ» լեցուն ելոյթ մը ունեցաւ:

★ ★ ★

Շահան սրբազան, իր «Ելլտըզ»ի ելոյթին մէջ կ'ըսէ, թէ՛

«Իմ հոգևոր ծննդավայրս Սուրբ Երուսաղէմն է: Այդ Սուրբ քաղաքին և անոր սրբավայրերուն մէջ ինչ որ ունինք մենք այսօր, կը պարտինք Օսմանեան կայսրութեան»:

Այստեղ, կը կարծենք, թէ Շահան Սրբազան, Օսմանցիները փառաբանելու իր մարմաջին մէջ, ծայրայեղութեան սահմանն ալ անցեր է նկատելով, որ օսմանցի Սուլթան «Եավուզ Սելիմ» կոչուածը, 1517-թ.ին միայն գրաւեց Երուսաղէմը:

Այստեղ, օգտակար կը նկատենք, Հայկական Համայնագիտարանին «Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւն» բաժնին մէջ [էջ 643] գրուածներէն մէջքերումներ ընել.

«Երուսաղէմում հայոց վանքեր ու եկեղեցիներ ստեղծվել են սկսած IV-րդ [չորրորդ] դարից:

Առաջին Պատրիարք Աբրահամ (638-669) մեկնել է Մուհամմէդ Մարգարէի մօտ և նրանից ստացել հաւատարմագիր, որով Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան և նրա հոգեւոր իրաւասութեան տակ գտնուող Եթովպացիները, Ղպտիներն ու Ասորիները ստացել են Սուրբ Յակոբի եկեղեցին, Քրիստոսի գերեզմանը եւ այլն»:

Այսինքն՝ Օսմանցիներէն գրեթէ ինը դարեր առաջ, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը ունէր արդէն, ինչ որ ունի այսօր:

Այս տեսակէտով, Շահան Սրբազանին՝ «Երուսաղէմի մէջ Հայոց ունեցածը՝ օսմանցիներուն կը պարտինք» ըսածին, շատ դժուար է հաւատալ:

★ ★ ★

Սրբազանը «Ելլտըզ»ի իր ելոյթին մէջ, հայկական մեր եկեղեցիները և դպրոցները պահելու մասին կը խօսի:

Բնական է այստեղ, խնդրոյ առարկան, Պոլսոյ մէջ գտնուող դպրոցները և եկեղեցիներն են, որոնց թիւը քսանի շուրջ են կը կարծենք:

Բայց մենք կ'ուզէինք, «Օսմանցի թուրքերուն լայնախոհութեան» փառաբանումի այս օրերուն Սրբազանին հարցնել, թէ Արեւմտեան

Հայաստանի և Անաթոլիոյ մէջ գտնուող հազարաւոր հայկական եկեղեցիները ի՞նչ եղան արդեօք:

Ի՞նչ եղան Արեւմտեան Հայաստանի մէջ գտնուող հայկական նարտարապետութեան կոթողներն հանդիսացող եկեղեցիները:

Մեծ մասը ասոնց, թուրք զինուորներու ձեռամբ, ուժանակով օդը հանուեցան, որ հայութենէն հետք չմնայ:

[Այս մասին՝ օտարներուն վկայութիւնը կայ]:

Սրբազան, մի՛ խօսիք օսմանեան կամ թրքական լայնախոռոքեան մասին:

Սփիւռփահայերը անոր ինչ ըլլալը շա՛տ լաւ գիտեն:

Դո՛ւք ալ գիտէ՛ք քնական է:

Բայց թուրքին լուծին տակ ապրող հայ մը, ստիպուած է չգիտնալ ձեւացնել..., մոռնալ և միայն թուրքին ըսածը կրկնել:

★ ★ ★

Բայց, Շահան սրբազանին «Երլտրզ»ի ելոյթին մեզի ամէնէն շատ ցաւ պատճառող մասը, հետեւեալ նախադասութիւնն է՝

«Եթէ ՊէՏԲ է, ՄԵՐ ԿԵԱՆՔՆ ԱԼ ԿՈՒ ՏԱՆՔ ԱՅՍ ԵՐԿՐԻՆ ՀԱՄԱՐ»:

Նայեցէ՛ք, Սրբազան. Պոլսոյ մէջ, թուրքին լուծին տակ ապրող հայ մը, գիտենք, թէ երբեմն ստիպուած է թուրքին առջեւ կեղծաւորութիւն ու շողոքոթութիւն ընել:

Բայց, ո՛չ՝ հայ կրօնականը:

Որովհետև Հայ եկեղեցին Ազգային եկեղեցի է: Եւ Հայ կրօնականը, Հայ ազգին ներկայացուցիչն է: Դուք, ուխտած է՛ք Հայ եկեղեցիին և նաև Հայ Ազգին ծառայելու: Այդ պատճառաւ ալ, անոնց համար, յանձնատու էք կեանքերնիդ գոհելու:

Ուստի, իրաւունք չունիք, «Թուրքիոյ հայրենիքին համար կեանքերնիս կու տանք» ըսելու:

Դուք՝ այս ուխտադրուծ խօսքերով, ձեր կատարած երդումը ժխտած եղաք:

Ձեր հոգևոր եղբայրը, Պոլսոյ նախկին Պատրիարք Շնորհիք Գալուստեանն ալ, ձեզ նման, հայ Ազգին ծառայելու համար կատարած երդումը դրժած էր:

Այս Պատրիարքը, 25-1-1984-թ.ին Անգարայի վարչապետարանին մէջ, այն ատենուան Թուրքիոյ վարչապետ Թուրկուտ էօզալին

ներկայութեան, զգուելի և ստորաքարշ ուղերձ մը կարդաց:

Այս ուղերձին նպատակը՝ ճիշդ նոյն օրը, Փարիզի մէջ, քրֆական հիւստոսարանը գրաւելու յանցանքով դատուող Հայ Գաղտնի Բանակին չորս հերոսներուն դէմ, իբր Պոլսոյ Պատրիարք, հակադրուիլ և քաջամարտիկներուն արարքը ձաղկել էր:

Ահա՛, ձեր հոգևոր եղբօր՝ «անշնորհ» Պատրիարքին խօսքերը.

«ԹՈՒՐԻՔԻՈՅ ՀԱՅԵՐԸ, ԱՅՍ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԱՒԱՏԱՐԻՄ ՊԱՇՏՊԱՆՆԵՐՆ ԸԼԼԱԼՈՎ, ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ ԵՂԱԾԻՆ ՊԷՍ, ԱՍԿԷ ՅԵՏՈՅ ԱԼ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԱՄԲՈՂԶԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, ԻՐԵՆՑ ԿԵԱՆՔԵՐԸ ՍԻՐՈՎ ԶՈՀԵԼԷ ՊԻՏԻ ԶՔԱՇՈՒԻՆ»:

[Անգարա, 24-1-1984-թ., Պոլսոյ Պատրիարք Շնորհք Արքայիս. Գալուստեան]

Դուք, այս պատրիարքին ըսածները՝ 12-7-1999-թ.ին «Երլտրզ»ի պալատին մէջ, գրեթէ նոյն բառերով, թութակի պէս կրկնեցիք:

Պոլսոյ Պատրիարք Շնորհք Արք. Գալուստեան, 1990-թ.ին էջմիածնի մէջ, սանդուխներէն վար գլորուելով մահացաւ:

Մենք, անձնապէս կը հաւատանք, որ Պոլսոյ Պատրիարքը, Հայ Եկեղեցիին և Հայ Ազգին ծառայելու համար, հայկական եկեղեցիին մէջ, Քրիստոսի խորանին առջև, իր կատարած հանդիսաւոր երդումը դրժած ըլլալուն պատճառա՛ւ այսպիսի եղբրական վերջ մը ունեցաւ, ենթարկուելով Աստուածային պատիժի:

Մենք, նոյնպէս կը հաւատանք, որ Դուք, Թութին համար ձեր կեանքը տալու պատրաստակամութիւն յայտնելով, «Հայ Եկեղեցիին և Հայ Ազգին ծառայելու» համար ձեր կատարած երդումը դրժած եղաք: Այս պատճառաւ, Շնորհք Պատրիարքին նման, Դուք ալ, ուշ կամ կանուխ, ձեր երկնային պատիժը կրնաք ստանալ:

5 - 10 - 1999

